ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2025 թվականի N 665 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» N 47-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման նախաբանից «և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի մայիսի 30-ի «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 380-Ա որոշման հավելվածի 2-րդ կետի» բառերը հանել.

2) որոշման N 1 հավելվածի՝

ա. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Թափոններն առաջացնող իրավաբանական անձի ղեկավարը, անհատ ձեռնարկատերը կամ նրանց կողմից լիազորված անձինք, համաձայն «Թափոնների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1.1-ին մասի, թափոնների անձնագրավորման համար «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային հարթակ) միջոցով կազմում և ոլորտում լիազորված մարմնի համաձայնեցմանն են ներկայացնում թափոնների անձնագրերը:»,

բ. 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում լիազոր մարմնի կողմից համաձայնեցված անձնագիրն էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացվում է թափոն առաջացնողին: Թափոն առաջացնողն անձնագիրն էլեկտրոնային հարթակի միջոցով հաստատելով՝ ծանուցում է ուղարկում լիազոր մարմնին:»,

գ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Անձնագիրն էլեկտրոնային հարթակի միջոցով համաձայնեցվում և հաստատվում է սույն կարգի 12-րդ կետով սահմանված անձնագրի բովանդակությանը համապատասխան, իսկ էլեկտրոնային հարթակից էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներբեռնվում է սույն կարգի N 2 հավելվածով սահմանված թափոնի անձնագրի տիտղոսաթերթի ձևին և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2007 թվականի փետրվարի 2-ի N 19-Ն հրամանով հաստատված թափոնի անձնագրի օրինակելի ձևին համապատասխան:»,

դ. 10-րդ կետը «մասին» բառից հետո լրացնել «կամ, եթե արտադրական գործընթացում առաջացող և անձնագրավորված թափոնի տարեկան փաստացի քանակությունը գերազանցում է թափոնի անձնագրով ներկայացված քանակի 20 տոկոսը» բառերով,

ե. 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին կետով.

«11.1. Թափոն առաջացնողի կողմից տվյալ տեսակի թափոնի համար սույն կարգի 10-րդ կետով սահմանված հիմքով նոր անձնագիր ներկայացնելու և հաստատելու դեպքում նախկինում հաստատված անձնագիրը լիազոր մարմնի

կողմից արխիվացվում է՝ գրանցամատյանում նշելով նոր անձնագրի համարը և հաստատման ամսաթիվը:»,

զ. 12-րդ կետի «բ» ենթակետում «և տվյալները» բառերը փոխարինել «կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու ու գործունեության վայրերը» բառերով,

է. 12-րդ կետի «դ» ենթակետը «քանակությունը» բառից առաջ լրացնել «տարեկան» բառով.

3) որոշման N 2 հավելվածում «գտնվելու» բառից հետո «վայրը» բառը փոխարինել «ու գործունեության վայրերը» բառերով, «և բնակության» բառերը՝ «, հաշվառման հասցեն ու գործունեության վայրը» բառերով և կետադրական նշանով, իսկ «200» թիվը՝ «20» թվով:

2. Թափոններն առաջացնող իրավաբանական անձի ղեկավարը, անհատ ձեռնարկատերը կամ նրանց կողմից լիազորված անձինք, մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը, լիազոր մարմնի հետ թղթային տարբերակով համաձայնեցրած և հաստատած թափոնների անձնագրերը թվայնացնելու՝ էլեկտրոնային փաստաթղթի փոխարկելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կարող են էլեկտրոնային հարթակի միջոցով լիազոր մարմնի հետ համաձայնեցնել տվյալ թափոնի էլեկտրոնային անձնագիրը և հաստատել այն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ